ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 մայիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

59
(3268)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՍՖԱԼՏԸ ՔՊ-Ի ԴԵՊՔՈՒՄ՝ ՁԱՐԳԱՑՈՒՄ

Նախընտրական շրջանում Հայաստանում կրկին ակտիվանում է հին ու ծանոթ մեխանիզմը. տարիներով չլուծված համայնքային խնդիրները հանկարծ դառնում են իշխանության «ուրախալի լուրեր»: Եթե նախկինում ընտրություններից առաջ ասֆալտ փռելը, շինարարական աշխատանքներ խոստանալը կամ համայնքային խնդիրներ լուծելու հայտարարությունները դիտարկվում էին որպես ընտրողի վրա ազդելու գործիք, ապա այսօր նույն ձեռագիրը նկատվում է արդեն ՔՊ-ի իշխանության օրոք:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, դիմելով վարդենիսցիներին, գրել է. «Սիրելի՛ Վարդենիսցիներ, եւս մեկ ուրախալի լուր ունեմ հայտնելու: Կայացել է Ծովակ-Վարդենիս 9 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհի հիմնանորոգման մրցույթը: Ծրագրով նախատեսվում է իրականացնել մայթերի եւ ջրահեռացման համակարգերի կառուցման, ճանապարհի հիմքի, ինչպես նաեւ երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրման աշխատանքներ: Ծրագրի ավարտին կիրականացվի նաեւ ճանապարհային նշանների տեղադրման եւ գծանշման աշխատանքներ: Այս ճանապարհը տարիներ շարունակ եղել է վարդենիսցիների ամենասպասված ու ամենակարեւոր խնդիրներից մեկը... Մենք շարունակում ենք հետեւողական աշխատել, որպեսզի խաղաղ ու կայուն պայմաններում զարգացնենք պետությունն ու մեր համայնքները»:

Առաջին հայացքից՝ սովորական ճանապարհաշինական ծրագրի մեկնարկ է, բայց նման մրցույթներ ամսվա ընթացքում շատ են հայտարարվում առանց ամպագոռգոռ գովազդի: Նախընտրական շրջանում նման հայտարարությունները քաղաքական ենթատեքստից զրկված դիտարկել հնարավոր չէ: Հատկապես, երբ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ինքն է ընդգծում, որ ճանապարհը «տարիներ շարունակ» եղել է վարդենիսցիների ամենասպասված խնդիրներից մեկը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի էկոպարեկային ծառայության պետ, ՔՊ-ական Վլադիմիր Կիրակոսյանի գույքային հայտարարագիրը, եկամուտներն ու կենսագրական տվյալները: Պատկերը, մեղմ ասած, ուշագրավ է. պետական համակարգում պաշտոններ զբաղեցրած եւ միաժամանակ ՔՊ կուսակցական ակտիվ գործունեություն ծավալող Կիրակոսյանի հայտարարագրում առկա են բնակարան, 2019 թվականի արտադրության Mercedes-Benz, միլիոնավոր դրամների կանխիկ միջոցներ, բանկային ավանդ, ինչպես նաեւ զգալի վարկային եւ փոխառության պարտավորություններ: Հայտարարագրի համաձայն՝ Վլադիմիր Կիրակոսյանը 2024 թվականի դրությամբ բաժնային սեփականությամբ բնակարան է ունեցել Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում: Բնակարանի 2/4 բաժնեմասը նա ստացել է 2022 թվականի նոյեմբերի 29-ին՝ ժառանգության կարգով: Ֆինանսական միջոցների բաժնում առավել ուշագրավ է կանխիկ դրամի ծավալը: Հայտարարագրի համաձայն՝ նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 միլիոն 533 հազար 872 դրամ եւ հավելյալ 149 հազար 445 դրամ: Իսկ կանխիկ դրամական միջոցները կազմել են 26 միլիոն դրամ, 7 հազար ԱՄՆ դոլար եւ 450 հազար ռուսական ռուբլի:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Նախընտրական քարոզարշավի շրջանակներում պետական համակարգն արդեն փաստացի լծված է քաղաքական գործընթացներին: Նախարարները տարբեր ձեւաչափերով ներգրավված են քարոզչական արշավներում, մարզային այցելություններում ու քաղաքական ակտիվության մեջ, հիմնականում արձակուրդի մեջ են: Տարբեր գերատեսչություններում գործում են ժամանակավոր կառավարման ռեժիմով: Այս օրերին Լենա Նանուշյանն է իրականացնում առողջապահության նախարարի ժամանակավոր պարտականությունները: Ասել է թե՝ առողջապահության համակարգի ղեկավարումը վստահվել է մի պաշտոնյայի, որի շուրջ իշխանության ներսում ու հանրային դաշտում վաղուց հարցեր են կուտակվել: Նախ՝ կերպարային ու քաղաքական ընկալումների տեսանկյունից Նանուշյանին դժվար է ասոցացնել ՔՊ-ի այն հիմնական թեզերի հետ, որոնք իշխանությունը տարիներ շարունակ առաջ է տարել: Մասնավորապես՝ հանրային քննարկումների առարկա է դարձել այն հանգամանքը, որ նրա որդին բանակում չի ծառայել առողջական պատճառաբանությամբ: Այս թեմայի մասին տարբեր հրապարակումներ ու քննարկումներ են եղել մեդիայում, հատկապես այն ֆոնին, երբ նույն իշխանության ներկայացուցիչները մշտապես խոսում են հավասար պարտավորությունների ու ծառայության կարեւորության մասին: Ընդ որում, նախարար Ավանեսյանի երկու որդիները ներկայումս ծառայում են բանակում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում վերջին օրերին լարված մթնոլորտ է տիրում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կոմիտեի ղեկավար Արթուր Նահապետյանը անցած շաբաթվա վերջին հավաքել է աշխատակազմին եւ փակ ժողով անցկացրել: Ըստ «Ժողովուրդ»-ի իրավապահ շրջանակներին մոտ կանգնած աղբյուրների՝ Նահապետյանը հայտարարել է, որ առաջիկայում «առավել լարված օրեր» են սպասվում, ուստի անհրաժեշտ է «գոտիները ձգել»: Նա աշխատակիցներին զգուշացրել է, որ արտաժամյա աշխատանքը գրեթե անխուսափելի է լինելու, իսկ գործի ծավալը՝ զգալիորեն աճելու է: Աշխատակազմին նաեւ հորդորվել է չտրտնջալ ծանրաբեռնվածությունից եւ պատրաստ լինել ինտենսիվ աշխատանքի: Թե ինչով է պայմանավորված նման մոբիլիզացիան, պաշտոնապես չի հաղորդվում, սակայն համակարգում շրջանառվող խոսակցությունների համաձայն՝ դա կարող է կապված լինել հունիսի 7-ին նախատեսվող ընտրությունների նախաշեմի հետ: Քաղաքական շրջանակներում վաղուց են քննարկումներ ընթանում այն մասին, որ իշխանությունը, ընտրական գործընթացներին ընդառաջ, ակտիվացնում է ուժային կառույցների աշխատանքը՝ ընդդիմադիր շրջանակների նկատմամբ ճնշումներ գործադրելու նպատակով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵԾ ՄԱՍԸ ՄՆԱՑԵԼ Է ՉԵՎԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ»

ArmLur.am-ը զրուցել է «Հայաքվե» ազգային - քաղաքացիական միավորման անդամ Մենուա Սողոմոնյանի հետ:

- Պարոն Սողոմոնյան, երեկ «Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ, ազգային բարերար Սամվել Կարապետյանը հանդես եկավ մամուլի ասուլիսով: Հավանաբար հետեւել եք: Ինչպիսի՞ տպավորություններ ունեցաք:

- Իմ տպավորությունները շատ դրական են: Այն հիմնական հարցերը, որոնք այսօր իսկապես հուզում են Հայաստանի հանրությանը՝ արտաքին քաղաքականությունից մինչեւ անվտանգային, սոցիալական եւ տնտեսական խնդիրներ, ասուլիսի ընթացքում ստացան հիմնարար եւ հնարավորինս սպառիչ պատասխաններ: Բացի այդ, անդրադարձ կատարվեց նաեւ այն ինտրիգային հարցերին, որոնք հաճախ օգտագործվում են Սամվել Կարապետյանի, նրա քաղաքական ուժի եւ ընդհանրապես ընդդիմադիր դաշտի հեղինակությունը նսեմացնելու նպատակով: Այդ հարցերին եւս հստակ պատասխան տրվեց: Մի կարեւոր հանգամանք էլ կուզեմ առանձնացնել. այսօր հենց Սամվել Կարապետյանն է թելադրում քաղաքական օրակարգը: Պատահական չէր, որ ասուլիսից հետո Նիկոլ Փաշինյանը բավական լարված եւ խառնված վիճակում արձագանքեց՝ խոսելով դատական գործընթացների մասին եւ այլն: Սա արդեն վկայում է այն մասին, որ մեդիա դաշտում նրա երկարամյա մենաշնորհը լրջորեն վիճարկվում է:

- Ձեր կարծիքով՝ եթե «Ուժեղ Հայաստանը» գա իշխանության, կկարողանա՞ վարել ավելի հավասարակշռված արտաքին քաղաքականություն, մասնավորապես ճիշտ բալանս պահել Եվրոպայի եւ Ռուսաստանի հետ հարաբերություններում:

- Եթե որեւէ քաղաքական ուժ առաջնորդվում է ոչ թե սեփական իշխանությունը պահպանելու, այլ Հայաստանի ազգային շահերով, ապա, բնականաբար, կարող է վարել նորմալ եւ արդյունավետ քաղաքականություն: Վստահ եմ՝ Հայաստանում կան բավարար չափով պրոֆեսիոնալ եւ հայրենասեր մարդիկ, որոնք կօգնեն ցանկացած պատասխանատու իշխանության ճիշտ որոշումներ կայացնել: Այսօրվա իշխանությունների խնդիրը հենց այն է, որ նրանց քաղաքականությունը մեծ մասամբ ուղղված է սեփական իշխանության պահպանմանը, իսկ դրա գինը դարձել են Հայաստանի շարունակական զիջումները: Ինչ վերաբերում է «Ուժեղ Հայաստանին», ապա այո՛, կարծում եմ՝ այդ ուժը կարող է վարել ավելի հավասարակշռված քաղաքականություն: Դրա համար կան թե՛ մարդկային ռեսուրսներ, թե՛ քաղաքական փորձ, թե՛ որոշակի համախմբում: Երբ լսում ես նրանց ծրագրային մոտեցումները, նկատում ես, որ դրանք բավական ռացիոնալ եւ տրամաբանական են: Այս իրավիճակում նույնիսկ համեմատելու եզրեր գրեթե չեն մնում:

- Օրերս Երեւանում տեղի ունեցան երկու կարեւոր միջոցառումներ՝ Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը եւ ԵՄ-Հայաստան առաջին գագաթնաժողովը: Դուք նաեւ մասնակցում էիք բողոքի ակցիաներին: Ինչպե՞ս կգնահատեք այս գագաթնաժողովների նշանակությունն ու արդյունքները:

- Այդ գագաթնաժողովների շուրջ ստեղծված աղմուկը, փայլն ու շոու-էֆեկտը իրական բովանդակության հետ այնքան էլ համահունչ չէին: Այո՛, որպես PR միջոցառում՝ ամեն ինչ շատ լավ կազմակերպված էր, բայց երբ փորձում ենք հասկանալ, թե կոնկրետ Հայաստանը ինչ շահեց այդ ամենից, պատկերը այնքան էլ հստակ չէ: Վերջին տարիներին մենք բազմիցս ականատես ենք եղել տարբեր «ռազմավարական» հայտարարությունների ու հռչակագրերի ստորագրման, սակայն դրանց մեծ մասը մնացել է ձեւական մակարդակում: Դրանք չեն լուծել Հայաստանի անվտանգության խնդիրները, չեն ապահովել տնտեսական էական առաջընթաց: Ավելին՝ Հայաստանը հաճախ օգտագործվում է որպես աշխարհաքաղաքական մրցակցության հարթակ: Իսկ դա վտանգավոր է, եթե դու ինքդ հստակ չես պաշտպանում սեփական պետական շահը:

- Այդ դեպքում ի՞նչ կարող էր շահել Հայաստանը եվրոպական ուղղությունից, որը, ըստ Ձեզ, այսօր չի ստանում:

- Հայաստանը Եվրոպայի հետ կարող է ունենալ շատ խոր եւ փոխշահավետ համագործակցություն: Մենք եվրոպական հասարակությունների հետ կիսում ենք արժեքային ընդհանրություններ: Հատկապես պետք է ընդգծեմ այնպիսի երկրների դերը, ինչպիսիք են Ֆրանսիան, Հունաստանը, Բելգիան եւ Նիդեռլանդները, որտեղ ապրում են նաեւ մեծ հայկական համայնքներ: Եվրոպայից մենք կարող ենք ստանալ ինստիտուցիոնալ բարեփոխումների փորձ, տեխնոլոգիական զարգացումներ, տնտեսական համագործակցության նոր հնարավորություններ: Բայց ցավոք, այս իշխանությունները հաճախ ավելի շատ զբաղված են արտաքին փայլ ստեղծելով, քան իրական բովանդակային հարաբերություններ կառուցելով: Օրինակ՝ նույնիսկ մարդկանց առօրյա փորձը ցույց է տալիս, որ նախկինում Եվրոպայի հետ շփումները շատ ավելի հեշտ էին՝ թե՛ վիզաների, թե՛ համագործակցության մակարդակով: Իսկ եթե խոսենք անվտանգության կամ տնտեսության մասին, ապա այստեղ նույնպես շոշափելի արդյունքներ չենք տեսնում: Պետությունը, որը չի կարողանում իր քայլերը վերածել իրական ազգային շահի, վերջիվերջո դառնում է արտաքին խաղացողների կողմից օգտագործվող գործիք:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԴԵՍՊԱՆԸ ՆԵԱՊՈԼՈՒՄ

Իտալիայում ՀՀ դեսպան Վլադիմիր Կարապետյանը 2026թ. մայիսի 11-12-ին աշխատանքային այցով գտնվում էր Նեապոլում, որի շրջանակներում ունեցավ մի շարք հանդիպումներ քաղաքի ղեկավարության, նաեւ տեղական ինքնակառավարման, տարածաշրջանային, կրթական, նորարարական եւ մշակութային ոլորտների ներկայացուցիչների հետ:

Դեսպանին այցի ընթացքում ուղեկցում էին Նեապոլի քաղաքապետի խորհրդական Ֆրանչեսկո Սենեսեն եւ հասարակական ու մշակութային գործիչ Միկկելե Դե Սիմոնեն: Այցի շրջանակներում դեսպան Կարապետյանը հանդիպումներ ունեցավ՝ Նեապոլի քաղաքապետ պրոֆ. Գաետանո Մանֆրեդիի, Նեապոլի քաղաքային խորհրդի նախագահ դոկտ. Վինչենցա Ամատոյի, Նեապոլի «L'Orientale» համալսարանի ռեկտոր, պրոֆ. Ռոբերտո Տոտտոլիի, Տարածաշրջանային մշտական հանձնաժողովի փոխնախագահ դոկտ. Ֆրանչեսկա Ամիրանտեի, Նորարարությունների եւ «Խելացի քաղաքի» հարցերով Նեապոլի քաղաքապետի հանձնակատար Վալերիո Դի Պիետրոյի, Կարլո Մորելլիի եւ նրա մշակութային ասոցիացիայի ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվեցին Հայաստանի եւ Նեապոլի միջեւ համագործակցության զարգացման հեռանկարները՝ ընդգրկելով կրթության, գիտության, մշակույթի, տեղական ինքնակառավարման, նորարարությունների, «խելացի քաղաքի» լուծումների, տնտեսական կապերի եւ քաղաքային զարգացման ոլորտները:

Հանդիպումները հնարավորություն տվեցին ամրապնդելու երկկողմ ինստիտուցիոնալ կապերը, նախանշելու կրթական եւ մշակութային փոխանակումների նոր ուղղություններ, ինչպես նաեւ քննարկելու Հայաստանի եւ Նեապոլի միջեւ գործնական համագործակցության ընդլայնման հնարավորությունները: Այցն ընդգծեց փոխադարձ հետաքրքրվածությունը՝ զարգացնելու հայ-իտալական կապերը տեղական եւ տարածաշրջանային մակարդակներում:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐ Է ՀԱՆՁՆԵԼ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում Ալժիրի Ժողովրդավարական Ժողովրդական Հանրապետության դեսպան Թուֆիկ Ջուամայը: Նախագահը շնորհավորել է դեսպանին պաշտոնը ստանձնելու առթիվ եւ հաջողություններ մաղթել պատասխանատու առաքելության իրականացման գործում: «- Մեզ համար Ձեր նշանակումը շատ կարեւոր է: Ընդհանրապես ոչ ռեզիդենտ դեսպանների ներկայությունը ցանկացած երկու երկրների հարաբերություններում, իհարկե, կարեւոր է: Վստահ եմ, որ Ձեր նշանակումը, ինչպես նաեւ Ձեր երկրում մեր դեսպանի նշանակումը, ավելի կակտիվացնեն Հայաստանի եւ Ալժիրի հարաբերությունները: Հայաստանն առանձնահատուկ հարաբերություններ ունի Ալժիրի եւ արաբալեզու երկրների հետ: Մեր տնտեսական եւ նաեւ քաղաքական ներուժը մեծ է իրար հետ համագործակցելու, համատեղ ծրագրեր իրականացնելու առումով»,- ասել է նախագահը: Դեսպան Թուֆիկ Ջուամայը շնորհակալություն է հայտնել ընդունելության եւ բարեմաղթանքների համար՝ նշելով, որ իր ջանքերը կներդնի Հայաստանի եւ Ալժիրի ժողովուրդների միջեւ բարեկամության առավել ամրապնդման, փոխվստահության խորացման եւ երկկողմ համագործակցության օրակարգի ընդլայնման ուղղությամբ: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձ են կատարել երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարներին եւ երկկողմ համագործակցության ակտիվացման հնարավորություններին: Քննարկվել են բարձր տեխնոլոգիաների, արհեստական բանականության, կրթության, տուրիզմի եւ առողջապահության ոլորտներում առկա համագործակցային ներուժի արդյունավետ իրացմանն առնչվող հարցեր: Այդ համատեքստում ընդգծվել է գիտելիքահենք տնտեսության զարգացման, նորարարական լուծումների խթանման, փորձի փոխանակման եւ մասնագիտական կապերի ընդլայնման կարեւորությունը:

Հանդիպմանը շեշտվել է նաեւ կրթական եւ գիտական հաստատությունների միջեւ համագործակցության խորացումը, համատեղ ծրագրերի իրականացումը, ինչպես նաեւ զբոսաշրջության ոլորտում փոխադարձ հետաքրքրության աճին նպաստող նախաձեռնությունների խրախուսումը: Անդրադարձ է կատարվել առողջապահության բնագավառում փորձի փոխանակման եւ մասնագիտական համագործակցության ընդլայնման հնարավորություններին: Հանդիպման ընթացքում կարեւորվել է միջազգային կազմակերպությունների եւ բազմակողմ հարթակների շրջանակում արդյունավետ փոխգործակցության շարունակական զարգացումը: Կողմերը շեշտել են նաեւ բարձրաստիճան եւ տարբեր մակարդակներում փոխայցելությունների կազմակերպման կարեւորությունը՝ որպես քաղաքական երկխոսության ակտիվացման եւ երկկողմ հարաբերությունների հետագա խորացման կարեւոր նախադրյալ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԺԱՄԱՆԵԼ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ

Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունել է Ամերիկայի Միացյալ Նահանգների պատվիրակությանը, որը ժամանել է Հայաստան՝ քննարկելու ԹՐԻՓՓ նախագծի իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքը: ԱՄՆ պատվիրակության կազմում են ԱՄՆ պետքարտուղարության, ինչպես նաեւ Զարգացման ֆինանսական կորպորացիայի ներկայացուցիչները: Ողջունելով հյուրերին՝ փոխվարչապետը Կառավարության անունից շնորհակալություն է հայտնել ԱՄՆ իշխանություններին 2025 թվականի օգոստոսի 8-ին տեղի ունեցած Վաշինգտոնի խաղաղության գագաթնաժողովի կազմակերպման համար եւ ընդգծել է գագաթնաժողովի կարեւոր ձեռքբերումներից մեկի՝ «Թրամփի ուղի հանուն միջազգային խաղաղության եւ բարեկեցության» նախագծի հետեւողական իրագործման կարեւորությունը: Կողմերը քննարկել եւ համաձայնեցրել են ԹՐԻՓՓ-ի իրականացման հետ կապված գործառնական եւ իրավական բնույթի մի շարք հարցեր: Մհեր Գրիգորյանը խոսել է նաեւ «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության մասին՝ շեշտելով տարածաշրջանում բոլոր հաղորդակցությունների ապաշրջափակման անհրաժեշտությունը, ներուժը եւ հեռանկարները:

ՕՊԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի ղեկավարությամբ 2026 թվականի մայիսի 12-ին տեղի է ունեցել օպերատիվ խորհրդակցություն: Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Արամ Արամյանը, Լիլիթ Գրիգորյանը, Էդգար Արսենյանը, Եղիազար Ավագյանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ Գրիգոր Էլիզբարյանը, Երեւան քաղաքի դատախազ Ռաֆայել Մանուկյանը, Գլխավոր դատախազության ստորաբաժանումների ղեկավարները, Երեւան քաղաքի վարչական շրջանների, մարզերի եւ կայազորների դատախազները:

Քննարկվել են զգայունություն ունեցող դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների հսկողությանը, վերահսկողությանը, ինչպես նաեւ աշխատանքի կազմակերպմանն ու կարգապահությանը վերաբերող մի շարք հարցեր: Բարձրացված խնդիրների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը տվել է խիստ հանձնարարականներ, սահմանել դրանց կատարման ժամկետներ:

ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՄԵՆԱՀԱՎԱՏԱՐԻՄ ԹԻՄԱԿԻՑԸ

2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ ArmLur.am-ը շարունակում է ներկայացնել առաջադրված քաղաքական ուժերի առաջնորդների կենսագրություններն ու գույքային հայտարարագրերը: Այս անգամ ուշադրության կենտրոնում է Լեւոն Զուրաբյանը, որը «Հայ ազգային կոնգրես» կուսակցության նախընտրական ցուցակի առաջին համարն է: Նշենք, որ կուսակցությունը ընտրություններին մասնակցում է 10 համարի ներքո:

Լեւոն Զուրաբյանի ունեցվածքը

Լեւոն Զուրաբյանի՝ 2024 թվականի գույքի եւ եկամուտների տարեկան հայտարարագրի համաձայն՝ նա զբաղեցնում է «Հայ ազգային կոնգրես» կուսակցության փոխնախագահի պաշտոնը, որը ստանձնել է 2021 թվականի մայիսի 17-ին: Հայտարարագրի համաձայն՝ տարվա սկզբի դրությամբ նա ունեցել է 4 միավոր անշարժ գույք: Դրանց թվում է Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Պաշտպանված» տարածքում գտնվող այգետնակ-ամառանոցը, որը ձեռք է բերել դեռեւս 1996 թվականի հունիսի 12-ին:

Նրա սեփականության կազմում է նաեւ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի «Պաշտպանված» տարածքում գտնվող հողամաս, որը 2022 թվականի դեկտեմբերի 23-ին ստացել է ժառանգության կարգով: Զուրաբյանը հայտարարագրել է նաեւ Երեւան քաղաքում գտնվող բնակարան, որը նրա միանձնյա սեփականությունն է: Այն գրանցվել է 1993 թվականի հունվարի 1-ին՝ այլ հիմքով:

Բացի այդ, նա ունի նաեւ Երեւանում գտնվող անհատական բնակելի տուն՝ տնտեսական շինություններով, որը ձեռք է բերել 2005 թվականի հուլիսի 1-ին՝ գնումով:

Տրանսպորտային միջոց Լեւոն Զուրաբյանը չի հայտարարագրել:

Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 հազար ԱՄՆ դոլար եւ 4 միլիոն դրամ: Նա հայտարարագրել է նաեւ 4 միլիոն 500 հազար դրամի կրիպտոարժույթ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 միլիոն դրամ: Եկամուտներ չի հայտարարագրել:

Քաղաքական անցած ուղին

Լեւոն Զուրաբյանը ծնվել է 1964 թվականի մարտի 9-ին Երեւանում: 1985 թվականին ավարտել է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: 1988 թվականին ավարտել է Երեւանի ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան եւ ստացել ֆիզիկոսի որակավորում: 2000 թվականին ավարտել է Կոլումբիայի համալսարանի միջազգային հարաբերությունների եւ պետական կառավարման ֆակուլտետը՝ ստանալով միջազգային հարաբերությունների մագիստրոսի աստիճան:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1989-1991 թվականներին՝ որպես Երեւանի ֆիզիկայի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող: 1991 թվականի հուլիսից մինչեւ նոյեմբեր եղել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի խորհրդական: Այնուհետեւ՝ 1991-1998 թվականներին, աշխատել է ՀՀ նախագահի օգնական, իսկ 1994 թվականից միաժամանակ եղել է նաեւ նախագահի մամուլի քարտուղարը:

1998-2012 թվականներին աշխատել է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գրասենյակում՝ որպես հասարակայնության հետ կապերի պատասխանատու:

2001-2004 թվականներին զբաղեցրել է PricewaterhouseCoopers ընկերության՝ Հայաստանում կապիտալի շուկայի զարգացման ծրագրի հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավարի պաշտոնը:

2005-2007 թվականներին եղել է Միջազգային ճգնաժամային խմբի վերլուծաբան:

2008-2013 թվականներին ղեկավարել է «Հայ ազգային կոնգրես»-ի կենտրոնական գրասենյակի համակարգման աշխատանքները:

2012 թվականի մայիսի 6-ին համամասնական ընտրակարգով ընտրվել է Ազգային Ժողովի պատգամավոր՝ «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքից: 2012 թվականի մայիսի 6-ից մինչեւ 2013 թվականի ապրիլի 13-ը եղել է անկուսակցական, իսկ 2013 թվականի ապրիլի 13-ից դարձել է «Հայ ազգային կոնգրես» կուսակցության փոխնախագահ:

Լեւոն Զուրաբյանը նաեւ տեսական եւ մաթեմատիկական ֆիզիկայի բնագավառներում գիտական մի շարք աշխատությունների հեղինակ է: Քաղաքական դաշտում Լեւոն Զուրաբյանը տարիներ շարունակ դիտարկվել է ոչ միայն որպես «Հայ ազգային կոնգրես»-ի առանցքային դեմքերից մեկը, այլեւ որպես Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ամենահավատարիմ քաղաքական թիմակիցներից ու նրա քաղաքական գծի հիմնական պաշտպաններից մեկը: Տասնամյակներ շարունակ նա մնացել է Տեր-Պետրոսյանի մերձավոր շրջապատում՝ զբաղեցնելով թե՛ քաղաքական, թե՛ կազմակերպչական կարեւոր դերեր եւ շարունակելով ներկայացնել ՀԱԿ-ի քաղաքական օրակարգը նաեւ այսօր՝ արդեն որպես կուսակցության նախընտրական ցուցակի առաջին համար:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻ ՔԱՆԻ ՇԵՆՔ Է ՓԼՈՒՋՎԵԼ

Բրազիլիայի Սան Պաուլոյի արեւմուտքում գտնվող շենքերից մեկում պայթյուն է տեղի ունեցել, որի հետեւանքով մի քանի շենք է ոչնչացվել: Այս մասին հաղորդում է CNN Brasil-ը: Մասնագետները ներկայումս ուսումնասիրում են միջադեպի վերաբերյալ տարբեր վարկածներ: Նախնական տեղեկությունների համաձայն՝ միջադեպը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ անձնակազմը գազամատակարարման համակարգում տեխնիկական սպասարկում էր իրականացնում: Պայթյունի պատճառը կարող էր լինել վնասված խողովակաշարը: Հրշեջ ծառայության տվյալներով՝ մեկ մարդ մահացել է, իսկ մի քանիսը վիրավորվել են: Փլատակների տակ մեկ մարդ է որոնվում:

ԶՈՀՎԵԼ Է 552 ՄԱՐԴ

Ապրիլի 17-ին՝ հրադադարի համաձայնագրի ուժի մեջ մտնելուց ի վեր, լիբանանցիների շրջանում զոհերի թիվը հասել է 552-ի, եւս 1149-ը վիրավորվել են: Այս տվյալները մեջբերել է Առողջապահության նախարարությունը, որի հայտարարությունը տարածել է «Ալ Ջազիրան»: Ավելի վաղ հաղորդվել էր, որ ապրիլի 17-ից ի վեր Իսրայելի հարձակումների հետեւանքով զոհվել է 380 մարդ: «Մարտի 2-ին ռազմական էսկալացիայի սկզբից ի վեր զոհված քաղաքացիական անձանց ընդհանուր թիվը վերջին 24 ժամվա ընթացքում 2846-ից աճել է մինչեւ 2869, իսկ վիրավորների թիվը՝ 8693-ից մինչեւ 8730», - ասվում է հայտարարության մեջ: Առողջապահության նախարարությունը նշել է, որ Իսրայելի ռազմաօդային ուժերը առավոտից ինտենսիվորեն ռմբակոծել են հարավային Նաբաթիե նահանգը եւ Արեւմտյան Բեքաա շրջանը: Զոհերի եւ վիրավորների թիվը, կանխատեսումների համաձայն, կաճի օրվա վերջում:

ԹԱԻԼԱՆԴԸ ԽՍՏԱՑՆՈՒՄ Է

Թաիլանդի իշխանությունները կխստացնեն երկիր ժամանող օտարերկրացիների ներգաղթի վերահսկողությունը սահմանին եւ զբոսաշրջիկների համար առանց վիզայի մնալը կսահմանափակեն մինչեւ 30 օր: Այս մասին հայտարարել է փոխվարչապետ եւ արտաքին գործերի նախարար Սիհասակ Ֆուանգկեկուոթը: Նրա խոսքով՝ թագավորության իշխանությունները մի քանի ամիս ուսումնասիրում են վիզային քաղաքականության հարցերը: «Արտաքին գործերի նախարարությունը կարծում է, որ ներկայիս 60-օրյա առանց վիզայի մնալը՝ մեկ 30-օրյա երկարաձգման հնարավորությամբ, չափազանց է եւ կարող է թույլ տալ զբոսաշրջության մտադրություն չունեցող անձանց չարաշահել այս հնարավորությունը: Մենք խտրականություն չենք դրսեւորում ազգության հիման վրա: Այնուամենայնիվ, մենք պետք է խիստ լինենք նրանց նկատմամբ, ովքեր զբաղվում են անցանկալի գործունեությամբ, հատկապես անվտանգության հարցերով», - ասել է նա՝ նշելով, որ Թաիլանդի իշխանությունները նաեւ «կխստացնեն ստուգումները՝ ապահովելու համար, որ երկիր մտնողների ծրագրերը համապատասխանեն իրենց տրված վիզաների պայմաններին»: Ապրիլին, Բանգկոկում թագավորության արտաքին քաղաքականության հայեցակարգի ներկայացման ժամանակ, Ֆուանգկեկուոթը հայտարարեց, որ Թաիլանդը կրճատում է զբոսաշրջիկների համար առանց վիզայի մնալու տեւողությունը 60-ից մինչեւ 30 օր՝ առցանց խարդախության դեմ պայքարելու համար:

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ»

ՄԻՋՆՈՐԴԱԳՐԵՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը միջնորդագրեր է ուղարկել «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) տնօրենին եւ Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարին՝ ՊՈԱԿ-ի եւ Նազիկ Ամիրյանի միջեւ 2007 թվականի դեկտեմբերի 26-ին, ինչպես նաեւ ՊՈԱԿ-ի եւ Վարշամ Ղարիբյանի միջեւ 2005 թվականի օգոստոսի 2-ին եւ 2006 թվականի հունվարի 19-ին կնքված՝ Սեւանա լճի ափամերձ հողամասերի վարձակալության պայմանագրերը լուծելու (դադարեցնելու) ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:



Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրել է ՊՈԱԿ-ի եւ Նազիկ Ամիրյանի, ինչպես նաեւ ՊՈԱԿ-ի եւ Վարշամ Ղարիբյանի միջեւ կնքված վարձակալության պայմանագրերը եւ վերաբերելի փաստաթղթերը: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ կնքված երեք պայմանագրերը երեք տարի ժամկետով են, սակայն պայմանագրերը շարունակում են գործել՝ անորոշ ժամկետով:

Ուսումնասիրության արդյունքներով պարզվել է նաեւ, որ վարձակալության պայմանագրերով նախատեսված են եղել հողի կադաստրային արժեքի աճի դեպքում հողատարածքների վարձավճարները փոփոխելու դրույթներ՝ նոր կադաստրային արժեքների մասին վարձակալներին նախօրոք ծանուցելու պայմանով: Մինչդեռ, 2021 թվականի հունվարի 1-ին՝ հողամասերի կադաստրային արժեքների աճի հիմքով վարձավճարների փոփոխության պայմաններում, վարձավճարների փոփոխության վերաբերյալ ծանուցումները վարձակալներին ուղարկվել են 3 տարի ուշացումով: Բացի այդ, ուսումնասիրությամբ պարզվել է, որ հողամասերի վարձակալության մրցույթների անցկացման մասին հայտարարությունները զանգվածային լրատվության որեւէ միջոցով հրապարակված լինելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ: Արձանագրված խախտումների կապակցությամբ հանցանքի մասին հաղորդումներ են ներկայացվել Քննչական կոմիտե:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿՎԵՐԱԴԱՐՁՎԻ

Կոտայքի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, 2025 թվականի հունիսի 20-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի եւ ֆիզիկական անձանց՝ 2007 թվականի օգոստոսի 10-ին եւ օգոստոսի 15-ին կնքված՝ հողամասերի առուվաճառքի 14 պայմանագրերն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջներով:

Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի մայիսի 11-ի վճռով բավարարել է Կոտայքի մարզի դատախազության հայցը: Վճռով՝ անվավեր են ճանաչվել շուրջ 1.3 հա մակերեսով, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ պատմական եւ մշակութային արժեքների օբյեկտներ հանդիսացող 14 հողամասերի առուվաճառքի պայմանագրերը: Որպես անվավերության հետեւանք, ի թիվս այլնի, անվավեր է ճանաչվել նաեւ հողամասերի նկատմամբ ֆիզիկական անձանց անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները: Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին կվերադարձվի շուրջ 1.3 հա մակերեսով 14 հողատարածք:

ԲԵՆԶԻՆ Է ԼՑՐԵԼ ԵՎ ՀՐԿԻԶԵԼ

Մայիսի 2-ին, արտակարգ դեպք է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 21:00-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստկանության գլխավոր վարչության Աշտարակի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ «դեմքի, կրծքավանդակի, որովայնի եւ զույգ վերին վերջույթների շրջանում 2, 3 աստիճան, մոտավոր 20 տոկոս մարմնի մակերեսի այրվածքներ» ախտորոշմամբ «Այրվածքաբանության ազգայինկենտրոն» բուժօգնության է տեղափոխվել մի երեխա:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ոստիկանության Աշտարակի բաժնի օպերատիվ խումբը՝ ավագ համայնքային ոստիկանի գլխավորությամբ, որտեղ պարզվել է, որ տուժածը Արագածոտնի մարզի բնակիչ 5-ամյա Կ. Մ.-ն է: Գ. Շամշյանի տեղեկություններով ոստիկանները պարզել են նաեւ, որ ժամը 19:30-ի սահմաններում Կ. Մ.-ն իրենց տան բակում խաղալիս խորոված համար նախատեսված մանղալի վրա բենզին է լցրել եւ հրկիզել, որի հետեւանքով ստացել է նշված մարմնական վնասվածքները: Դեպքի փաստով ոստիկանության Աշտարակի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչություն:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐՎԱԾՆԵՐ Է ՀԱՍՑՐԵԼ 2 ՔԱՂԱՔԱՑՈՒ

Մայիսի 3-ին վիճաբանություն է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 17:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մալաթիայի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ շտապօգնության բժիշկները «Աստղիկ» բժշկական կենտրոն բուժօգնության են տեղափոխել երկու քաղաքացու: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ոստիկանության Մալաթիայի բաժնի օպերատիվ խումբը՝ ավագ համայնքային ոստիկանի գլխավորությամբ, որտեղ պարզվել է, որ վիրավորներից մեկը Երեւանի բնակիչ 40-ամյա Էդգար Ջ.-ն է՝ «ձախ կզակի շրջանի կտրած վերք» ախտորոշմամբ, մյուսը՝ Երեւանի բնակիչ 42-ամյա Արմեն Յ.-ն է՝ «ձախ թուլակողի շրջանի կտրած վերք ախտորոշմամբ»: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ Մալաթիայի համայնքային ոստիկանները պարզել են, որ վերջիններս նշված վնասվածքը ստացել են անհայտ անձի կողմից Հաղթանակ թաղամասում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ եւ ոստիկանների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ մարմնական վնասվածք հասցրած անձը հանդիսանում է Երեւանի բնակիչ 34-ամյա Հարութ Ա.-ն, ով ավտոմեքենան կայանելու շուրջ ծագած վիճաբանության ժամանակ դանակին նմանվող առարկայով հարվածներ է հասցրել Արմեն Յ.-ին եւ Էդգար Ջ.-ին՝ վերջիններիս պատճառելով մարմնական վնասվածքներ: Դեպքի փաստով ոստիկանության Մալաթիայի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին:

ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ԿԱՍԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի մարզային կենտրոնի տեսուչների կողմից Ռոզա Մանուկյան Վահանի անհատ ձեռնարկատիրոջը պատկանող հանրային սննդի օբյեկտում (ք.Արտաշատ, Օգոստոսի 23 փ/50) իրականացված ստուգման ընթացքում արձանագրվել են սանիտարահիգիենիկ նորմերի մի շարք խախտումներ, մասնավորապես՝

- սննդի կառույցը նախագծված, կառուցված ու տեղակայված չի եղել այնպես, որ բացառվի կեղտի կուտակումը, օտար մասնիկների թափանցումը սննդամթերքի մեջ, գոլորշու խտացումը, մակերեսների վրա բորբոսների առաջացումը,
- հատակը, պատերը չեն ունեցել հարթ մակերես, չեն պահվել նորոգ վիճակում,
- առաստաղները չեն պահվել նորոգ վիճակում, չեն բացառվել կեղտի կուտակումները, մասնիկների թափվելու հնարավորությունը,
- չի եղել սանհանգույց եւ անձնակազմի համար նախատեսված հանդերձարան:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը կասեցվել է:

● *Մայիսի 4-ից 10-ը ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցվել է ինքնասպանության փորձի 15 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՕՏԱՐՈՒՄ ԵՆ

5 տարում՝ 2021-2026թթ. Դիլիջան համայնքի ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը բնակելի եւ հասարակական կառուցապատման հողամասերի տասնյակ, եթե ոչ՝ հարյուրավոր կասկածելի աճուրդներ է անցկացրել: Նախկինում բենզալցակայանում բենզինի լիցքավորող աշխատած, իր անձնական գործում «սեռ» գրառման դիմաց «արու» գրած, 2021թ. փետրվարի 26-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումով Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված Դ. Սարգսյանը 2024թ. մայիս-հունիս ամիսներին համայնքային հողերից 1650 քմ՝ հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 11 միլիոն 550 հազար դրամով վաճառել է հարազատ եղբորը՝ Սասուն Սարգսյանին: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն այդ առթիվ վարույթ է հարուցել եւ համայնքի ղեկավարի նկատմամբ վարչական տուգանք սահմանել 300 հազար դրամ:

Իր վարչապետության 7-րդ տարում՝ 2025թ.-ին, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց համայնքներում ձեւական աճուրդներով, էժան գներով հողերի օտարումը թույլ չտալու մասին: Սակայն մինչեւ 2020 թվականը պետական կամ համայնքային հող գնելու աճուրդները անցկացվում էին առնվազն 2 հոգու մասնակցությամբ, թեեւ հաճախ երկրորդ մասնակցի ներկայությունը ձեւական էր լինում՝ զուտ օրենքը չխախտելու համար: 2020թ.-ին Նիկոլ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը փոփոխություն է կատարել Հողային օրենսգրքում, ինչի արդյունքում աճուրդ կարող է անցկացվել նաեւ մեկ հոգու մասնակցությամբ: Այդ օրենսդրական փոփոխությունից օգտվում են Ն. Փաշինյանի կուսակից համայնքապետերը, այդ թվում՝ Դիլիջան համայնքի ղեկավարը, որը բազում աճուրդներ է անցկացրել մեկ մասնակցով: Համայնքապետ Դ. Սարգսյանը Դիլիջան քաղաքի հողերը մեկնարկային գնով, ուղղակի վաճառքով օտարում է նաեւ ընդլայնման ձեւով: Արդյունքում Դիլիջան համայնքի բյուջե չեն մտնում տասնյակ միլիոնավոր դրամներ: Ահավասիկ, վերջին օրինակներից մեկը: Դիլիջանի համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին են դիմել քաղաքացիներ Եվա Կամոյի Իսկանդարյանը, Մարուսյա Արմենի Ամիրջանյանը եւ Գայանե Ռազմիկի Դիլանյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճղ. թիվ 91 հասցեի, իրենց սեփականության իրավունքով պատկանող 9008.8քմ հողամասին կից գտնվող (Թբիլիսյան խճղ.թիվ 77/7 հասցեի) 3800քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրենց օտարելու խնդրանքով: Դիլիջանի համայնքի ղեկավարը մայիսի 7-ին համայնքի ավագանուն առաջարկություն է ներկայացրել նշված 3800քմ հողամասն ուղղակի վաճառքի ձեւով, ընդլայնման կարգով 25 միլիոն 970 հազար 340 դրամ արժեքով օտարել Եվա Իսկանդարյանին, Մարուսյա Ամիրջանյանին եւ Գայանե Դիլանյանին: Համայնքապետի առաջարկին կողմ են քվեարկել համայնքի ավագանու 12 անդամ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵԱՏՄ

ԿԱՐՈՂ Է ՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը, թե ինքը չի մասնակցելու մայիսի 28-ին Աստանայում կայանալիք Եվրասիական տնտեսական միության բարձրագույն խորհրդի նիստին, քաղաքական եւ աշխարհաքաղաքական առումով շատ ավելի խորքային ենթատեքստ ունի, քան առաջին հայացքից կարող է թվալ: Առավել եւս՝ այն ֆոնին, երբ ընդամենը օրեր առաջ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հրապարակային հայտարարություններով ակնարկում էր, որ Հայաստանի եվրոպական ուղղությունը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ Մոսկվա-Երեւան հարաբերությունների համար, իսկ ամենակարեւոր քննարկումները նախատեսված են հենց մայիսի 28-ի ԵԱՏՄ գագաթնաժողովում:

Պուտինը հայտարարել էր, որ եթե Հայաստանը շարժվում է դեպի Եվրոպական միություն, ապա վաղ թե ուշ ստիպված է լինելու ընտրություն կատարել, քանի որ «անհնար է միաժամանակ լիարժեք լինել երկու տարբեր ինտեգրացիոն համակարգերում»: Ավելին՝ Ռուսաստանի նախագահը հիշեցրել էր նաեւ Ուկրաինայի փորձը՝ ակնարկելով, որ նման աշխարհաքաղաքական շրջադարձերը կարող են լուրջ ցնցումների հանգեցնել: «Մենք տեսանք, թե Ուկրաինայում ինչ եղավ, երբ հասարակությանը տարան կտրուկ աշխարհաքաղաքական ընտրության ճանապարհով: Այդպիսի հարցերը պետք է շատ զգույշ քննարկվեն, ժողովրդի հետ, հանրաքվեի միջոցով»,- ասել էր Պուտինը՝ փաստացի ակնարկելով, որ Հայաստանի դեպքում եւս նման որոշումը կարող է ունենալ ոչ միայն տնտեսական, այլեւ անվտանգային եւ քաղաքական հետեւանքներ:

ՌԴ նախագահը նաեւ նշել էր, որ այս թեման մանրամասն քննարկվելու է հենց մայիսի 28-ին Աստանայում կայանալիք ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի նիստում: Սա է պատճառը, որ Փաշինյանի չմասնակցելու որոշումը քաղաքական շրջանակներում արդեն դիտարկվում է ոչ թե պարզապես քարոզարշավային զբաղվածության, այլ բավական զգայուն դիվանագիտական քայլի համատեքստում:

Երեկ Էրեբունի մոլի դիմաց ասուլիսի ժամանակ Փաշինյանը հայտարարեց, որ դեռ ապրիլի 1-ին՝ Մոսկվա կատարած այցի ընթացքում, անձամբ տեղեկացրել է Պուտինին, որ նախընտրական քարոզարշավի պատճառով չի կարողանա մասնակցել ոչ մայիսի 9-ի միջոցառումներին, ոչ էլ մայիսի 28-ի նիստին: Նույն տեղեկությունը նա փոխանցել է նաեւ Ղազախստանի նախագահ Կասիմ Ժոմարտ Տոկաեւին: Հայաստանի պատվիրակությունը կներկայացնի փոխվարչապետ Միեր Գրիգորյանը:

Սակայն քաղաքական դիտարկումները ցույց են տալիս, որ խնդիրը միայն քարոզարշավը չէ: Առավել եւս, երբ հենց այս օրերին Ռուսաստանի իշխանությունները սկսել են ավելի բաց եւ կոշտ խոսել Հայաստանի արտաքին քաղաքական ընտրության մասին: Պուտինը փաստացի հայտարարել էր, որ անհնար է միաժամանակ ամբողջ ծավալով ինտեգրվել եւ ԵԱՏՄ-ին, եւ Եվրամիությանը, իսկ ապագայում Երեւանը ստիպված կլինի կատարել ռազմավարական ընտրություն: Այդ հայտարարությունը շատերի կողմից ընկալվեց որպես նախազգուշացում պաշտոնական Երեւանին:

Ուշագրավ է նաեւ, որ մայիսի 28-29-ին Աստանայում կայանալիք V Եվրասիական տնտեսական ֆորումը եւ ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի նիստը այս տարի առանձնահատուկ քաղաքական նշանակություն ունեն: Ֆորումի գլխավոր թեման թվային մրցակցությունն ու արհեստական բանականությունն է, սակայն իրական քաղաքական օրակարգը, ըստ փորձագիտական շրջանակների, լինելու է ԵԱՏՄ-ի ապագան՝ աշխարհաքաղաքական վերադասավորումների պայմաններում:

Այստեղ է, որ Փաշինյանի բացակայությունը դառնում է քաղաքական ուղերձ: Փաստացի, Հայաստանի վարչապետը բաց է թողնում այն հարթակը, որտեղ, ամենայն հավանականությամբ, քննարկվելու էին ոչ միայն տնտեսական ինտեգրման հարցեր, այլեւ Հայաստանի հետագա տեղն ու դերը ռուսական ազդեցության համակարգում:

Վերջին ամիսներին Երեւանը միաժամանակ ակտիվացրել է հարաբերությունները Եվրոպական միության հետ՝ խորացնելով քաղաքական երկխոսությունը, անվտանգության ոլորտում համագործակցությունը եւ տնտեսական օրակարգը: Այդ ֆոնին Մոսկվայում ավելի ու ավելի հաճախ են հնչում դժգոհություններ, թե Հայաստանը փորձում է աստիճանաբար հեռանալ ռուսական ազդեցության գոտուց:

Փաշինյանն ինքն էլ, արձագանքելով «ապահարզան» ձեւակերպումներին, հայտարարել է, որ Հայաստանը լիարժեք անդամ է ԵԱՏՄ-ում եւ նպատակ չունի վնասելու Ռուսաստանի շահերին: Սակայն միաժամանակ նա չի հերքել, որ ապագայում կարող է առաջանալ ընտրություն կատարելու անհրաժեշտություն: Սա, ըստ էության, առաջին անգամներից է, երբ պաշտոնական Երեւանը բաց տեքստով ընդունում է, որ նման սցենար հնարավոր է:

Քաղաքական շրջանակներում արդեն քննարկվում է, որ հենց մայիսի 28-ի նիստը կարող է դառնալ շրջադարձային, չի բացառվում, որ փակ քննարկումների ընթացքում ԵԱՏՄ անդամ երկրների ղեկավարները փորձեն հստակեցնել Հայաստանի դիրքորոշումը՝ հատկապես եվրոպական ինտեգրման խորացման հարցում:

Ավելին, փորձագետները չեն բացառում, որ Մոսկվան կարող է սկսել ավելի կոնկրետ պահանջներ ներկայացնել Երեւանին՝ հասկանալու համար, թե որտեղ է անցնում Հայաստանի «կարմիր գիծը»: Այդ իմաստով Փաշինյանի բացակայությունը կարող է ընկալվել ոչ միայն որպես ներքաղաքական զբաղվածության հետեւանք, այլ նաեւ որպես փորձ՝ խուսափելու բարդ եւ հնարավոր ճնշումներով ուղեկցվող քաղաքական քննարկումներից:

Ուշադրության է արժանի նաեւ մեկ այլ հանգամանք. եթե նախկինում Երեւանը փորձում էր հավասարակշռված քաղաքականություն վարել՝ առանց կտրուկ հայտարարությունների, ապա այժմ արդեն հրապարակային մակարդակում քննարկվում է ԵԱՏՄ-ԵՄ հնարավոր հակասության թեման: Իսկ դա նշանակում է, որ տարածաշրջանում սկսվում է նոր քաղաքական փուլ, որտեղ Հայաստանից վաղ թե ուշ ակնկալելու են ավելի հստակ պատասխան՝ ո՞ր ուղղությամբ է շարժվում երկիրը:

Այդ պատճառով էլ մայիսի 28-ի Աստանայի նիստը կարող է դառնալ ոչ թե հերթական տնտեսական հավաք, այլ Հայաստանի արտաքին քաղաքական ապագայի շուրջ կարեւորագույն քննարկման հարթակ: Եվ հենց այդ հանդիպմանը Նիկոլ Փաշինյանի բացակայությունը արդեն ինքնին քաղաքական մեսիջ է թե՛ Մոսկվային, թե՛ ԵԱՏՄ մյուս գործընկերներին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՓՈՐՁՈՒՄ Է ՀԵՌԱՑՆԵԼ

Եվրոպական միությունը (ԵՄ) փորձում է թուլացնել Հայաստանի կապերը Ռուսաստանի հետ եւ ուժեղացնել իր ազդեցությունը երկրի վրա: Այս մասին մայիսի 12-ին հայտնել է ՌԴ ԱԳՆ ԱՊՀ երկրների չորրորդ դեպարտամենտի տնօրեն Միխայիլ Կալուգինը: Նրա խոսքով՝ «հայտարարված նպատակները կարող են հնչել որպես բարոյական կամ դրական, սակայն իրականում այդ առաքելությունների նպատակը ակնհայտ է՝ ուժեղացնել Եվրամիության վերահսկողությունը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի եւ տնտեսության վրա՝ դրանով իսկ նպաստելով երկրի հեռացմանը Մոսկվայից»:

Կալուգինը նաեւ նշել է, որ եվրոպացի ներկայացուցիչները միտումնավոր ձեւավորում են Ռուսաստանի բացասական կերպար՝ ներկայացնելով նրան որպես Հայաստանի անկախության հակառակորդ: Նրա խոսքով՝ ԵՄ-ում առանց հիմքերի մեղադրում են Ռուսաստանին «հիբրիդային հարձակումների» եւ Հայաստանի ներքին գործերին միջամտելու մեջ՝ միաժամանակ անտեսելով սեփական ակտիվ ներգրավվածությունը երկրի ներսում ընթացող գործընթացներում: «Ավելին, ԵՄ-ը բազմիցս բռնվել է այլ երկրների ընտրական գործընթացներին ուղղորդելու փորձերի վրա: Մենք տեսնում ենք, որ այդ նույն թեզերը տարածում են նաեւ որոշ հայկական լրատվամիջոցներ եւ պաշտոնական դեմքեր», - ասել է Կալուգինը:

Միեւնույն ժամանակ՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյան-ը մայիսի 11-ին հայտարարել է, որ Հայաստանը շարունակում է մնալ Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ, եւ ներկայում անհրաժեշտություն չկա հանրաքվե անցկացնել Եվրամիության կամ Ռուսաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ: Նրա խոսքով՝ այս հարցը արդեն քննարկվել է նաեւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ աշխատանքային մակարդակով:

Ա. Վ.

● *Մայիսի 4-ից 10-ը ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցվել է ճանապարհատրանսպորտային պատահարի 41 դեպք:*

ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՐՋԱՆԻԿ Է

Իսպանիայի նորընծա չեմպիոն «Բարսելոնայի» գերմանացի գլխավոր մարզիչ Հանս-Դիտեր Ֆլիկը հաստատել է, որ երկարաձգելու է պայմանագիրը կատալանական ակումբի հետ: Այն նախատեսված կլինի մինչեւ 2028թ. հունիս եւս մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ: Այս մասին հայտնում է News.am-ը: «Շատ երջանիկ եմ, որ երկարաձգելու եմ պայմանագիրը: Նախորդ նվաճումները վստահություն են տալիս եւս մեկ կամ երկու տարով աշխատելու համար: Շատ մարզիչներ ուրախ կլինեին երկարաձգել երեք կամ չորս տարով, բայց «Բարսելոնայում» ավելի լավ է սահմանափակել այդ ժամկետը: Հիմա ունեմ պայմանագիր մինչեւ 2028թ. հունիս: Եթե ամեն ինչ լավ լինի, եւս մեկ տարով կերկարաձգեմ: Երկու կողմերի համար էլ շահավետ պայմանագիր է: Հասկացան, որ գտնվում եմ ճիշտ տեղում: Մեր կողմից պարտավորությունն է ձգտել առավելագույն մակարդակի եւ նվաճել նոր տիտղոսներ: Բոլորն ունեն երազանք Չեմպիոնների լիգայի մասին: Փորձեցինք նվաճել նաեւ այդ տիտղոսը եւ կշարունակենք փորձել: Շնորհակալ եմ վստահության եւ աշխատանքը շարունակելու հնարավորության համար»,-Ֆլիկի խոսքը մեջբերում է AS-ը: «Բարսելոնան» Ֆլիկի ղեկավարությամբ երկու տարի անընդմեջ նվաճել է Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը:

ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայ գրոսմայստեր Հայկ Մարտիրոսյանը դարձել է արծաթե մեդալակիր Իտալիայում անցկացված «Sardinia World Chess Festival 2026» շախմատի միջազգային մրցաշարում, գրում է News.am-ը: Նա 9 հնարավորից վաստակել է 7 միավոր եւ բաժանել 2-4-րդ տեղերը՝ լրացուցիչ ցուցանիշներով զբաղեցնելով 2-րդ տեղը: Հայ գրոսմայստեր Մամիկոն Ղարիբյանը նույնպես վաստակել է 7 միավոր եւ լրացուցիչ ցուցանիշներով զբաղեցրել 4-րդ տեղը, հաղորդում է ՀՇՖ-ի մամուլի ծառայությունը: Լավագույն եռյակը ունեցավ հետեւյալ տեսքը՝ 1-ին տեղ՝ Ֆրեդերիկ Սվանե՝ 7.5 միավոր, 2-րդ տեղ՝ Հայկ Մարտիրոսյան՝ 7 միավոր, 3-րդ տեղ՝ Յան Նեպոմնյաշչի՝ 7 միավոր: Հայաստանից մասնակցում էին նաեւ գրոսմայստեր Էմին Օհանյանը եւ ՖԻԴԵ-ի վարպետ Սարգիս Մանուկյանը, որոնք վաստակեցին 5.5-ական միավոր:

Skyline

ԱՆԽԱՓԱՆ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Խոշոր շինարարական նախագծերը միշտ գտնվում են հանրության ուշադրության կենտրոնում, եւ բացառություն չէ նաեւ Երեւանի դեմքը փոխող Skyline համալիրը:

Շատերին է հետաքրքրում, թե ինչ փուլում են գտնվում աշխատանքները «Ռենշին» ներդրումային-քաղաքաշինական ընկերության այս մեգանախագծում: Շինհրապարակից կադրերն ու տեղեկությունները փաստում են մի բան՝ շինարարությունը գտնվում է ակտիվ ընթացքի մեջ, աշխատանքային եռուզեռը չի դադարում, եւ ամեն ինչ ընթանում է այնպես, ինչպես նախատեսված էր: Տասնյակ տեխնիկա եւ հարյուրավոր մասնագետներ ամեն օր աշխատում են տեղում՝ ապահովելով նախագծի առաջընթացը: «Ռենշինում» վստահեցնում են, որ գործընթացը գնում է միջազգային գործընկերների կողմից մշակված ժամանակացույցով: Դա հնարավոր է՝ նրանց համաշխարհային մակարդակի փորձագիտական աջակցությամբ ու տեղի թիմի բարձր պրոֆեսիոնալիզմով:

Անդրադառնալով աշխատանքների կազմակերպմանն ու ընթացքին՝ «Ռենշին» ընկերության Օպերացիոն տնօրեն Լեւոն Կասպարովը պարզաբանում է. «Նման մասշտաբային նախագծերն ուղղակի անհնար է անթերի կյանքի կոչել առանց գլոբալ փորձառության կիրառման: Աշխարհի առաջատար ինժեներական եւ կառավարող ընկերությունների հետ մեր ամենօրյա համագործակցությունը մեզ տալիս է այն հիմնական վստահությունն ու ռեսուրսը, որն անհրաժեշտ է գործընթացները նախատեսված պլանով շարունակելու համար: Նրանց միջազգային փորձի շնորհիվ մենք հեշտությամբ հաղթահարում ենք բոլոր օպերացիոն մարտահրավերները, ինչի արդյունքում շինհրապարակում աշխատանքը ոչ մի որպես կանգ չի առնում»:

Օգտագործվող գերժամանակակից շինարարական տեխնոլոգիաները ոչ միայն պահպանում են աշխատանքների արագ տեմպը, այլեւ բացառում են որեւէ տեխնիկական շեղում նախապես գծված պլանից՝ միաժամանակ պահավոտելով համաշխարհային ամենաբարձր մակարդակի անվտանգություն եւ ապահովություն:

Գրագետ կառավարման եւ միջազգային խոշոր ու առաջատար ընկերությունների հետ գործընկերության արդյունքում Skyline նախագիծն ապացուցում է իր կայունությունը, իսկ ընկերությունը հավատարիմ է մնում իր սահմանած բարձր որակին:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը մայիսի 18-ին հրավիրում է տոնելու Թանգարանների միջազգային օրը եւ մայիսի 16-ին մասնակցելու «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառմանը: Թանգարանների միջազգային օրը նշվում է յուրաքանչյուր տարի մայիսի 18-ին, որն այս տարի կրում է «Թանգարանները միավորում են մասնատված աշխարհը» խորագիրը՝ ընդգծելով թանգարանների առանցքային դերը՝ որպես մշակութային երկխոսության, փոխըմբռնման եւ համամարդկային արժեքների պահպանման ու փոխանցման հարթակներ:

Հայաստանի թանգարանները, միանալով միջազգային նախաձեռնությանը, կազմակերպում են բազմաբովանդակ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, կրթական ծրագրեր, վարպետաց դասեր, հանրային քննարկումներ եւ հատուկ այցելություններ՝ նախատեսված տարբեր տարիքային խմբերի եւ հետաքրքրությունների շրջանակ ունեցող մարդկանց համար: Թանգարանների միջազգային օրվա շրջանակում մայիսի 16-ին կանցկացվի նաեւ ամենասպասված մշակութային միջոցառումներից մեկը՝ Թանգարանների գիշերը: Այդ օրը Հայաստանի բազմաթիվ թանգարաններ իրենց դռները կբացեն այցելուների առջեւ մինչեւ ուշ գիշեր՝ առաջարկելով յուրահատուկ մշակութային ծրագիր: Այցելուները հնարավորություն կունենան բացահայտելու թանգարանային հավաքածուները նոր ձեւաչափով, մասնակցելու ինտերակտիվ միջոցառումների եւ վայելելու մշակութային հարուստ միջավայր:

Միջոցառումների նպատակն է խթանել հասարակության հետաքրքրությունը մշակութային ժառանգության նկատմամբ, ուժեղացնել թանգարանների եւ հանրության միջեւ կապը, ինչպես նաեւ ընդգծել մշակույթի կարեւորությունը համերաշխ եւ միասնական հասարակության կառուցման գործում: Մայիսի 16-ին ծրագրին միացած թանգարաններն անվճար սկզբունքով կընդունեն այցելուներին ժամը 11:00-ից մինչեւ 24:00-ը, իսկ մայիսի 18-ին՝ ըստ հիմնական այցելության ժամերի: Հրավիրում ենք բոլորին միանալ տոնական միջոցառումներին եւ միասին բացահայտել թանգարանների միավորող ուժը:

Թանգարանների միջազգային օրը սահմանվել է 1977 թվականին Թանգարանների միջազգային խորհրդի կողմից (ԻԿՕՄ)՝ նպատակ ունենալով համախմբելու թանգարաններին հասարակության եւ մարդկության առջեւ ծառացած գլոբալ մարտահրավերների շուրջ՝ միաժամանակ բարձրացնելու հանրային իրազեկվածությունը թանգարանների կարեւորագույն դերի մասին: «Թանգարանների գիշեր» ծրագիրը մեկնարկել է 2005 թվականից Ֆրանսիայի մշակույթի եւ հաղորդակցության նախարարության նախաձեռնությամբ՝ ԻԿՕՄ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ Եվրախորհրդի հովանավորությամբ: Հայաստանը միացել է «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառմանը 2005 թվականից:

ՀԱՅՏՆԻ ԵՆ

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ Հայաստանի կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ Երեւանում մեկնարկում է Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական 13-րդ մրցույթը: Նախագծի գործընկերն է Քալաշյան պարարվեստի դպրոցը: Այս տարի Էդվարդ Միրզոյանի անվան մրցույթին իրավունք են ստացել մասնակցելու 15 պատանի կոմպոզիտորներ. կրտսեր խմբում ընդգրկված են Արթուր Գրիգորյանը, Հրաչյա Ղազարյանը, Մոնթե Միքայելյանը, Ադրիանա Շահինյանը, Կարեն Պետրոսովը, Արայիկ Սարգսյանը, Արամ Ֆրանգուլյանը, ավագ խմբում՝ Գրիգոր Խաչատուրյանը, Վահե Ղուլիջողլյանը, Գարիկ Հարությունյանը, Անդրե Հովակիմյանը, Նորայր - Նիկողոսյանը, Դալար Չիչիանը, Վիկտորյա Ուլիխանյանը, Յուրի Ուսաչյովը: Մայիսի 13-ին եւ 15-ին Հայաստանի կոմպոզիտորների միության համերգասրահում տեղի կունենան կրտսեր եւ ավագ խմբերի մրցութային երկու փուլերը (ժամը՝ 17:00): Մայիսի 18-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կկայանա մրցույթի գալա համերգ-մրցանակաբաշխությունը, որի ընթացքում հայտնի կդառնան այս տարվա մրցանակակիրները: Համերգային երեկոյի ընթացքում կհնչեն մրցանակակիրների ստեղծագործությունները: Այս տարի առաջին անգամ բեմում կներկայացվի նաեւ խորեոգրաֆիկ պատկեր, որի հիմքում կլինեն նախորդ տարվա մրցանակակիրների ստեղծագործությունները:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԵՎՐԱՏԵՍԻԼ»

ԽՍՏԱՑՆՈՒՄ ԵՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Եվրատեսիլը», որն արդեն ճնշման տակ էր Իսրայելի մասնակցության վերաբերյալ բոյկոտների պատճառով, բախվում է նոր ճգնաժամի՝ քվեարկության համակարգի վերանայման՝ անցյալ տարվա մրցույթում Իսրայելի մասնակցի օգտին չափազանց եւ համակարգված ձայների ավելացման մեղադրանքներից հետո, հաղորդում է Reuters-ը: Այս մասին տեղեկանում ենք News.am-ից:

Մրցույթի կազմակերպիչ Եվրոպական հեռարձակողների միությունը (EBU) 2026 թվականի համար նոր կանոններ է սահմանել՝ «անհամաչափ գովազդային արշավները» զսպելու համար, այն բանից հետո, երբ մի քանի հեռարձակողներ կասկածի տակ դրեցին քվեարկության արդյունքները: Քննադատության կենտրոնում էր այն եզրակացությունը, որ Իսրայելը հանրության կողմից ստացել է միավորների 83%-ը՝ զբաղեցնելով երկրորդ տեղը, մինչդեռ հաղթող Ավստրիան ստացել է հանրության ձայների միայն 41%-ը եւ հաղթել Ժյուրիի շնորհիվ:

Կազմակերպիչները պնդում են, որ անցյալ տարի ակտիվ արտաքին գովազդ է եղել, նաեւ սոցիալական ցանցերում գրառումներ, այդ թվում՝ Իսրայելի արտաքին գործերի նախարարության հաշվին, որոնք խրախուսում էին օգտատերերին քվեարկել մինչեւ 20 անգամ: Ի պատասխան՝ մրցույթի տնօրեն Մարտին Գրինը հայտարարել է, որ նման գործողությունները «անհամաչափ մարքեթինգ» են եւ անհամատեղելի են շոուի ոգուն, այդ իսկ պատճառով սահմանափակումներ են մտցվել:

Նոր կանոնների համաձայն՝ մեկ անձի համար վճարման մեթոդի առավելագույն ձայների քանակը 20-ից կրճատվել է մինչեւ 10: Համակարգված գովազդային արշավների դեմ լրացուցիչ միջոցներ են ձեռնարկվել: Այնուամենայնիվ, կազմակերպիչները ընդունում են, որ անհնար է ամբողջությամբ վերացնել արտաքին գովազդի ազդեցությունը, քանի որ յուրաքանչյուր քվեարկության համակարգ ենթակա է մանիպուլյացիաների:

Հետագա լարվածությունը առաջացավ այն բանից հետո, երբ Եվրոպական հեռարձակողների միությունը (EBU) պաշտոնական նախազգուշացում տվեց իսրայելական KAN հեռարձակողին՝ այս տարվա մասնակցի՝ Նոամ Բետանի տեսանյութի վերաբերյալ, որը պարունակում էր «10 անգամ քվեարկել Իսրայելի օգտին» ուղղակի կոչ: Կազմակերպիչները հայտարարեցին, որ նման հրահանգները խախտում են մրցույթի կանոնները: Ի պատասխան՝ KAN-ը հայտարարեց, որ համապատասխանում է EBU-ի բոլոր պահանջներին, եւ որ վիճահարույց գործողությունները արտիստի թիմի նախաձեռնությունն էին եւ կապված չեն արգելված ֆինանսավորման հետ՝ հավելելով, որ նմանատիպ պրակտիկա կիրառվում է նաեւ այլ մասնակից երկրների կողմից:

EBU-ն ընդգծում է, որ բոլոր երկրները ավանդաբար ձգտում են մոբիլիզացնել աջակցությունը, հատկապես իրենց սփյուռքի միջոցով, եւ մրցույթն անվանում է «երաժշտության օլիմպիական խաղեր»: Այնուամենայնիվ, քվեարկության համակարգերի փորձագետ Խուան Մորենո-Տերներոն նշում է, որ կատարյալ մոդելներ չկան. ցանկացած կանոն կարող է մանիպուլացվել, եւ յուրաքանչյուր համակարգ ունի իր խոցելիությունները:

Այսպիսով, «Եվրատեսիլը» կրկին հայտնվել է քաղաքական եւ մշակութային հակամարտության կենտրոնում, որտեղ երաժշտական հարցերը ավելի ու ավելի են միահյուսվում միջազգային քաղաքականության, մեդիա արշավների եւ հանրային քվեարկության վրա ազդելու պայքարի հետ:

ՀՐԱՇՔ ԳՈԼԵՐԸ

2026 թվականի Աշխարհի առաջնության մեկնարկին մնացել է ուղիղ մեկ ամիս: ՖԻՖԱ-ն ներկայացնում է տարբեր տարիներին խփված այնպիսի հրաշալի գոլեր, որոնք առհավետ մնացել են պատմության մեջ:



«Մեդիամաքսը» առաջարկում է ծանոթանալ դրանց հետ ու պատրաստվել ֆուտբոլային մեծ տոնին:

Սկսենք 1974 թվականից, երբ Աշխարհի առաջնությունն ընդունել էր Արեւմտյան Գերմանիան: 2-րդ խմբում ընդգրկված Բրազիլիայի ու Զաիրի (այժմ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն) հավաքականները մրցել են հունիսի 22-ին Գելզենկիրխենի «Պարկ» մարզադաշտում: Հանդիպումն ավարտվել է բրազիլացիների 3:0 հաշվով հաղթանակով: 66-րդ րոպեին 2-րդ գոլը հեղինակել է Բրազիլիայի 10 համար Ռիվելինոն:

Մի անգամ Պելեն ՖԻՖԱ-ի պաշտոնական կայքի հարցին, թե ինչ որակ կցանկանար ունենար այլ ֆուտբոլիստից, պատասխանել է. «Ռիվելինոյի ձախ ոտքը»: Հենց այդ հզոր «զենքով» էլ Ռիվելինոն գրավել է Կազադի Մվամբայի դարպասը՝ մինչ այսօր էլ հիացմունք պարգեւելով ֆուտբոլի սիրահարներին:

«Նրա հարվածը բացառիկ էր, անհավանական գոլեր էր խփում տուգանային հրապարակից դուրս: Պատահական չէ, որ մականունը «Patada Atɨmica» (ատոմային հարված) էր: Բրազիլիան հիանալի ֆուտբոլիստների պակաս երբեք չի ունեցել, բայց Ռիվելինոյի հարվածները շատ դաժան էին ու անչափ ճշգրիտ»,- ասել է Բրազիլիայի ընտրանու աստղերից 1970-ի Աշխարհի չեմպիոն Տոստաոն: Ռիվելինոյով հիացել են բոլորը, նույնիսկ Բրազիլիայի հավաքականի երդվյալ թշնամի Արգենտինայի երկրպագուները: Իսկ ահա Մարադոնան խոստովանել է, որ մեծացել է՝ իրեն կուռք համարելով Ռիվելինոյին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՓՈԽԱՐԻՆՎԵԼ Է

«Դինամո»-«Կրասնոդար» խաղում Էդուարդ Սպերցյանը փոխարինվել է մեջքի խնդիրների պատճառով: Այս մասին հայտնում է «Մեդիամաքսը»: «Էդիկը մեջքի խնդիրներ ունի: Նա հերոսական բնավորություն է ցույց տալիս ու խաղադաշտ դուրս գալիս վերջին խաղերին: Շնորհակալ ենք բոլոր երկրպագուներին, ովքեր ողջ ընթացքում մեր կողքն են եղել: Ինչպես էլ ավարտվի մրցաշրջանը, ես շնորհակալ եմ իմ բոլոր ֆուտբոլիստներից հսկայական աշխատանք կատարելու համար»,- պարտությունից հետո ասել է «Կրասնոդար»-ի գլխավոր մարզիչ Մուրադ Մուսաեւը: Մեկնաբանություն տվել է նաեւ Սպերցյանը. «Պետք է բոլոր հնարավորություններն օգտագործեինք, բայց հաջողությունը մեր կողմից չէր: Հույս դեռ կա ու կանենք ամեն ինչ առաջնության վերջին խաղում «Օրենբուրգ»-ին հաղթելու, ինչպես նաեւ Գավաթը նվաճելու համար»:

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՉԷ

Paris Saint-Germain F.C.-ի իսպանացի գլխավոր մարզիչ Լուիս Էնրիկեն, չնայած թիմի հետ հերթական հաջող մրցաշրջանին, չի ճանաչվել Ֆրանսիայի առաջնության ավարտվող մրցաշրջանի լավագույն մարզիչ: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների ազգային միության՝ UNFP-ի կազմակերպած քվեարկության արդյունքում տարվա լավագույն մարզիչ է ճանաչվել Պիեր Սաժը, որը գլխավորում է RC Lens-ը: Քվեարկության եզրափակիչ փուլում Սաժը առավելություն է ստացել բավականին ուժեղ մրցակիցների նկատմամբ: Պիեր Սաժի գլխավորությամբ «Լանսը» այս մրցաշրջանում ցուցադրել է կայուն ու տպավորիչ խաղ: Թիմը Ֆրանսիայի առաջնության 32 հանդիպումներից հետո վաստակել է 67 միավոր եւ զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը՝ շարունակելով պայքարը բարձր տեղերի համար: Միեւնույն ժամանակ ՊՍԺ-ն, որը վաղուց ապահովել է չեմպիոնությունը, ունի 73 միավոր եւ շարունակում է գերիշխել ֆրանսիական ֆուտբոլում: Լուիս Էնրիկեի գլխավորությամբ փարիզյան ակումբը ոչ միայն դարձավ Ֆրանսիայի չեմպիոն, այլեւ հաջող հանդես եկավ եվրոպական ասպարեզում՝ նվաճելով նաեւ Չեմպիոնների լիգայի գավաթը, ինչը շատերի համար նրան դարձնում էր մրցանակի գլխավոր ֆավորիտ: Սակայն UNFP-ի ընտրությունը ցույց տվեց, որ մրցանակաբաշխության ժամանակ հաշվի են առնվել ոչ միայն տիտղոսները, այլեւ թիմի հնարավորությունների համեմատ արձանագրված արդյունքները եւ խաղային առաջընթացը:

Հետաքրքիր է, որ արդեն մայիսի 13-ին RC Lens-ն ու Paris Saint-Germain F.C.-ն կմրցեն միմյանց դեմ Ֆրանսիայի առաջնության 29-րդ տուրից հետաձգված խաղում: Այդ հանդիպումը լրացուցիչ ուշադրության կենտրոնում կլինի, քանի որ երկրպագուները հնարավորություն կունենան տեսնելու մրցաշրջանի երկու ամենաքննարկվող մարզիչների դիմակայությունը խաղադաշտում:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում մայիսի 17-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Պոչատ աղվեսը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Արդյո՞ք ՀՀ արդարադատության նախարարությունն իրականացնում է քաղաքացիների ընդունելություն:

Գայանե Դավթյան, 31 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Յուրաքանչյուր ամիս ՀՀ արդարադատության նախարարի մոտ տեղի է ունենում քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում նախարարը քննարկում է քաղաքացիների դիմումները, բողոքները, առաջարկությունները եւ այլ հարցեր:

Յուրաքանչյուր քաղաքացու հատկացվում է 10 րոպե ժամանակ, որը լրանալուն պես վերջինիս ընդունելությունն ավարտվում է:

Ընդունելությանը հերթագրվելու համար անհրաժեշտ է նախապես խնդրի վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնել՝ նշելով խնդիրը եւ ընդունելության խնդրանքը: Վերոնշյալ գրավոր ընթացակարգը պարտադիր է բոլոր քաղաքացիների համար: Դիմում կարող են ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ այն ուղարկել ՀՀ արդարադատության նախարարության էլ. փոստի հասցեին՝ info@moj.am կամ այն թղթային տարբերակով ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն (Վազգեն Սարգսյան 3/8):

Եթե գրավոր դիմումում նշված հանգամանքների ուսումնասիրությամբ պարզվում է, որ քաղաքացին ենթակա է ընդունելության ներկայանալու, նա այդ մասին տեղեկացվում է բանավոր՝ ըստ իր տրամադրած կոնտակտային տվյալների, եթե ենթակա չէ ընդունելության ներկայանալու՝ նա այդ մասին տեղեկացվում է գրավոր:

Անձն ընդունելության օրը պետք է ներկայանա անձը հաստատող փաստաթղթով:

Նախարարի կողմից ընթացք են տրվում միայն Արդարադատության նախարարության իրավասությանը վերաբերող խնդիրներով ընդունելություն կատարելու վերաբերյալ դիմում-բողոքներին՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, այն է՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Նախարարի անունից քաղաքացիների ընդունելությունն իրականացնում են նաեւ նախարարի տեղակալները:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նախարարի տեղակալների մոտ ընդունելության եկած անձանց համար կրկնակի ընդունելություն կազմակերպել հնարավոր չէ: Փոխնախարարների մոտ ընդունելության համար եւս գործում է նախարարի մոտ ընդունելության համար սահմանված գրավոր դիմումի վերոշարադրյալ ընթացակարգն առանց բացառությունների:

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է հեղինակային իրավունքը, եւ ինչպե՞ս է ծագում այն:

Մանե Ալավերդյան, 38 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հեղինակային իրավունքը իրավաբանական տերմին է, որն օգտագործվում է գիտության, գրականության եւ արվեստի ստեղծագործությունների նկատմամբ ունեցած իրավունքները նկարագրելու համար: Հայաստանի Հանրապետությունը, ինչպես եւ այլ երկրների մեծ մասը ղեկավարվում է «Գրական եւ գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայով, համաձայն որի՝ հեղինակային իրավունքի տիրապետումը կախված չէ որեւէ ձեւականության իրականացման հետ: Այսինքն՝ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է ստեղծագործության ստեղծման փաստով եւ կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից եւ որեւէ այլ գործողության կատարումից («Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մաս):

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝shamshyan.com-ի

Նոր Հաճնում գտնվող բնության գողտրիկ անկյունը վերածվում է աղբանոցի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 3 + 7 + 14 +18
	Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 14 + 17
	Կոտայքի նախալեռներ	+ 10 + 13 + 18 + 21
	Գեղարքունիք	+ 3 + 6 + 14 + 17
	Լոռի	+ 5 + 9 + 18 + 22
	Տավուշ	+ 7 + 10 + 19 + 22
	Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 12 + 15
	Արագածոտնի նախալեռներ	+ 9 + 14 +18 + 22

	Արարատ	+ 11 + 14 + 20 + 23
	Արմավիր	+ 11 + 15 + 22 + 25
	Վայոց ձորի լեռներ	+ 4 + 7 + 13 + 16
	Վայոց ձորի նախալեռներ	+ 10 + 14 + 21 + 25
	Սյունիքի լեռներ	+ 3 + 6 + 13 + 16
	Սյունիքի նախալեռներ	+ 5 + 9 + 18 + 22
	Սյունիքի հովիտներ	+ 12 + 15 + 25 + 28
	Երեւան	+ 12 + 14 + 21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հաբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*